ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

1. «Որոշ կանոնադրութեան և ծրագրի անհրաժեշտութիւնը և Հայոց թեմական հոգեւոր դպրանոցների վարչական և ուսումնական կարգ ու կանոնի՝ դիտցիպլինայի միաձեւութեան գաղափարը». Մոսկուա, 1900. հեղ. բժիշկ Սիմոն Շահնազարեանց։

Փորձ տեսուչ մ'է, հեղինակ նաեւ ուրիշ կրթական գրութեանց, որ կը ներկայացնէ դպրոցական վարչութեանց՝ այս ամենօրեայ կարեւոր երկասիրութիւնը։ Հեղինակը՝ ամենէն աւելի ողջամիտ և հմտեստ եղանակաւ՝ կը մտածէ հայ դպրոցաց բարւոքումը, որ կարեւորագոյն բանն է ազգային յառաջադիմութեան և լուսաւորութեան։ Դպրոցական տեսակապիրներով կը ցուցնէ Հայոց թեմական հոգեւոր դպրանոցներու տարտամ վիճակը, ժողովրդեան լքուցիչ վարմունքը, ձրի պահանջները, ճոխ բայց անգործ ծրագիրները, և այլն, և այլն։

Անհրաժեշտ է, կ'ըսէ նա, որոշ և յարատեւ կանոնադրութիւն մի՝ որ և է հաստատութեան համար. ինչ յառաջադիմութիւն կը սպասուի դպրոցէ մը, ուր ամէն նոր ուսուցիչ նոր օրէնսդիր մ'է, և հետեւաբար չկայ ուսմանց անընդհատ շարայարութիւն։

Պէտք են բոլոր հայ դպրոցները մի և նոյն ուղղութեան, նոյն ծրագրին հետեւիլ, պետական դպրոցներուն պէս. այսու՝ բաղդին բերմամբ Երեւանէն Տփղիս եկող պատանի մը պիտի կարենայ անընդհատ իր ուսման ընթացքը շարունակել։

Բայց պէտք է այդ ծրագիրը լաւ մտածուած լինի, և մանրամասնօրէն յօրինուած, որոշելով նաեւ պաշտպանները. ի հակառակէն՝ ուսուցիչ մի ըստ կամս յերկարելով դիտութիւն մի՝ պիտի խանգարէ ուսմանց շրջանը և կամ թերակատար ուսում մի պիտի առնուն աշակերտք։

Ահաւասիկ հեղինակին արդար փափաքները. մեծապէս ըղձալի է որ մեծապոյ Շահնազարեանցի ազգօգուտ դատափարները՝ ծանոթանան ամէն ուսուցչի, բնթռնուին և գործադրուին[1]։ Դպրոցի զարգացման հոգ ստանձնողք՝ յառաջադիմական գեղեցիկ արդիւնքներ պիտի ստանան, զանոնք առարկայ ընելով իրենց մտադրութեան և ջանից։ Ն. Քարամեանցի անմոռաստ գատաստանը (Լոնմայ, 1900, գիրք Բ. գրական երեւոյթներ) յառաջ կու գայ գրքին շատ հարեւանցի ակնարկ մը տալէն. նոյն իսկ կը կարծէ թէ գրքոյկը «Ներսիսեան վարժարանի» համար գրուած լինի։

Ի հարկէ պիտի չյիշենք մատենիս լեզուական բազմաթիւ անհեզութիւնքն. վասն զի գիրգոլարար ասոնք հասարակաց են ուսասէր մամլոյն մէջ, ոչ թէ հեղինակին սեփական. — թէպէտ յամենայն դէպս՝ դիտարուսանելի բաներ չեն այնքան յեղյեղուած ազգարարութիւնք և պատճառաբանութիւնք։

Գրքոյկս կազմուած է 84 էջերէ, տպագրութիւնը խնամով եղած և ընտիր թղթի վրայ, գինն է 1 բուբլի։

Կ. Տ. Ն.

2. Համառօտ պատմութիւն Ներսիսեան հոգեւոր դպրոցի եօթանասունեւհինգամեայ գոյութեան։ — Բանասէրներու շրջանակին

---

1. Հակառակ մի քանի դժուարութեանց։ Մեծարգոյ հեղինակը առանձին գլխով (էջ 76) հերքել ուզած է Մշակի այն գաղափարը՝ թէ «հաստատուն ծրագիր մը՝ հակառակ է դիտութեանց այժմեան յառաջադիմութեան». անշուշտ նորութիւններ կ'աւելնան միշտ դիտութեանց վրայ, զոր աշակերտն կրնայ ուսանել առանց ծրագրէն վարուելու. և հիմնական փոփոխութիւն մը՝ չատ տարիներու գործ է։

Կարծենք թէ կարելի է նաեւ, պարբերական ժողովներով որոշ, հաստատակաց և մանրամասն ծրագրին և դասագրոց վրայ կարեւոր փոփոխութիւնները ընել. — վասն զի՝ պատմութիւնը միշտ կ'ընդարձակի։ բնաբանութիւնը կը հոխանայ, աշխարհագրութիւնը կը փոփոխուի։

digitised by A.R.A.R.@

մէջ դեռ թարմ է Յտ. Մալխասեանցի, Փաւստոս բիւզանդացւոյ մասին գրուածը. նոյն գրչին է և առաջիկայ հատորիս։ Յետ արագ ակարի մի ձգելու, գարուս սկիզբը, Կովկասու Հայերուն մութ կացութեանը վրայ, հեղինակս կը համառօտէ Ներսէս Աշտարակեցւոյն կեանքը. լաւ դուրս կը ցայտեցնէ անոր կրօնաւոր բնոյթը և գործունեայ միտքը։ Մինչեւ 94 էջը սուտ հիներորդիր կը զբաղի, ինչպէս որ պէտք էր. բայց անով միայն չէլնար. անտես չընար յիշելու և գանոնք որ այս կրթական հաստատութեանը այժ տուին, մինչ նա նուազելու վրայ էր։ Ալամդարեանը, օրինակի համար, որ աքսորանքէն և եղերական մահուանէն դուրս, շատ յարգանաց արժանի անձ էր։

Հեղինակս՝ վարժարանիս եօթանասուն և հինգամեայ գոյութեան մէջ երկու գլխաւոր շրջան կը նշանակէ. «դար Ալամդարեանի» «դար Շանշեանցի»։ Առաջինը նշանաւոր է Արովեանով, Յտ. Նազարեանցով. երկրորդն այնու որ՝ «եթէ տեսուչը լաւ մէկի յանձնարարն ու վշտանար՝ սա ամէնի մեծ ցաւ կպատճառէր աշակերտին՝ քան որ և իցէ ծեծի ու պատժի պատճառած»։

Ուսմանական էջերէն կը սկսի քիչ մի միակերպութիւն։ Դէպ գլուխը՝ մեկնութիւնն է ամէն գլխին, սակայ ինչ նոր հանգամանքներով. ուրիշ երեսներու մէջ այլ պակաս չեն քանի մը կրկնութիւններ, որ «Համառօտ պատմութեան» մը համար ներելի չեն։

Եօթներորդ հոգաբարձութիւնն է այս որ ներկայիս Ներսիսեան վարժարանը կը կառավարէ։ Եօթնին այլ բրած փոփոխութիւնքը, — նկատմամբ ուսումներու ծրագրին, վարժարանի շէնքին, գրամի տրամադրութեան, դասարաններու բացման, ուսուցիչներու թուոյն — այս բոլորը, երբեմն նոյն իսկ անոնց անձնական տեսութիւնները, նոյն մանրամասնութեամբ կը համառօտէ, ինչ մանրամասնութեամբ որ երբեմն լրագիրները մեծամեծ տերութեանց խորհրդարաններուն մէջ խօսուածները կ'ամփոփեն։ Գրեթէ ոչ ինչ չրսեր թէ գպրոցը ինչ նշանաւոր անձեր արտադրած է, գրական կամ քաղաքական ասպարիզին վրայ։ Աւելի լաւ գպրոցին ոգին կը փայլեցնէր եթէ գէթ առանձին գլուխ մ'առանց նուիրած ըլլար։ Աշակերտները վարժարանի մէջ պտուղներն են, և ինչպէս ծառ մ'իւր պտուղին կը ճանչցուի, այսպէս և գպրոց մ'իրենիներէն։ Պատերին գեղեցիկ գոյներէն մէկը նուազ է։ Դարձեալ Ներսիսեան վարժարանը, Կովկասու մէջ, հայութեան վառարանը համարուած է. թէ ինչ աստիճան լոյս և ջերմութիւն տարածեց իւր շրջակայ գաւառներուն մէջ՝ և ոչ մի երես կը կարդանք այս բանիս նկատմամբ։ Պ. Յտ. Մալխասեան դպրոցի նիւթական զարգացման միայն ուշ դարձուցեր է։

Գրքիս ընթերցումը լաւ զրգիռ մի պիտի ըլլայ ազգային միւս բարձրագոյն վարժարաններուն նմանելու Ներսիսեանին որ 189⁷/₈ին կը պահէր 676 աշակերտ, 189⁸/₉ին 599, ներկայիս ունի ուսումներու ընդարձակ ծրագիր մը, և 27 նշանաւոր ուսուցիչներ։

Գրոցս ընթերցողները սկիզբը պիտի գտնեն լուսատիպ պատկերը վարժարանիս հիմնադրին, որ եղաւ Կովկասու համար այն՝ ինչ որ եղաւ մեծն Մխիթար բոլոր հայ ազգին։

Ե. Ն. Ա.

3. Լուսայ. 1900, Գիրք Բ։ — Կիսամեայ թերթիս բովանդակութեան հանդէպ՝ կարծենք զմեզ բուրաստանի մը առջեւ. գեղեցիկ՝ բայց մանաւորապէս գոյնզգոյն։ Պատմական (Հայերը Բիւզանդիայուն. Ն. Քարամեանց. Ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը), քնարական (Շիրակացւոյ ժողովը, Արշակ Տէր Մինասեան, Մկրտիչ Լիմի, Երուանդ Շահազիզ) հետաքրքրիչ յօդուածներու քով՝ կը գտնէք նորա մէջ քերթուածներ, վէպեր, տեղագրական, ազգագրական, և մատենախօսական յօդուածներ։ Թէպէտ երկար է իւրաքանչիւր յօդուածը՝ բայց այդ բնական պահանջն է թերթին պարբերական ընթացքին։

«Հայերը Բիւզանդիայում» գրութիւնը՝ հարկ է նշանակել իւր ամենէն հետաքրքրակար յօդուածներուն միջէն. Ն. Քարամեանց, առաջին անգամ, կը ծանօթացնէ պատմական շրջան մի՝ յորում հայն ապրեցաւ մեծաշուք և հաստատուն պարծանօք լի կեանք մը։ Ներկայ գրքիս մէջ կը պատմէ

digitised by A.R.A.R.@

ամբողջ կայսերութիւնը Զմշկիկի, որ «բիւզանդական կայսրներից ամենից քաջն է և գուցէ ամենից շատը»։ Կարեւորագոյն են ազգային պատմութեան համար 131–145 էջերը. Զմշկիկ յունական բանակաւ կ'իջնէ Մուշ քաղաքը. Աշոտ Ողորմած, հայ նախարարաց և արաքացի ամիրայից զերիշխանը, Սէյֆ Էդդուլացի յաղթողը, որու հետ Զմշկիկ «իբրեւ հաւասարի հետ էր վարուում» 80,000 զօրօք կը բանակի Երիւատայ ափունքը. բանակացութեանց հետեւանքը հաշտութիւնը կը լինի, որովհետեւ հայ կայսրը կը փափագէր հայ զօրքեր ունենալ, որոնք «քրիստոնեայ արեւելքի ամենից լաւագոյններն էին համարուում»։

«Ոգեւոր»՝ պատմական վէպ մի է, Հերակլ կայսեր պատերազմներէն առնուած, և գրուած Մաուրուս Եուլիա զերմանացիէն. թարգմանելով այսպիսի վէպեր, որոնց մի էջը նկարն է պատմութեան մի բաներն, օգտաւէտ ծառայութիւն մը կը մատուցանէ Պ. Իսահակ Ցարութիւնեան, մանաւանդ երբ անոնք ունի կրթիչ զգացումներ ունենան։ Ցիշելով սորա հետ «Ժայռ», և «Կոյր Եբաժիշտ» գեղեցիկ թարգմանութիւնները, գովելով «Բնաւորութեան յատկութիւններ» կրթական գրութիւնը, «Ս. Ժողովոց կանոնաց» հրատարակութիւնը, կ'անցնինք այն յօդուածոց՝ որոց մասին կարեւոր կը տեսնուին ինչ ինչ դիտողութիւններ։

«Ս. Էջմիածնի ԺԶ դարադարձը»՝ թերթիս առաջին յօդուածն է. գեղեցիկ կենսագրութիւն մ'է Ս. Լուսաւորչի, շատ մի հատուածներու բաժնուած՝ յորս կը պատմուին Ս. Գրիգորի կենաց բոլոր հանգամանքները հանդերձ իրեն ընծայուած մատենագրութեամբ, և նոքազոյն եզրակացութեամբը քննադատութեան։

Թէպէտ յօդուածագիրն խորհրդաւոր չէ վերջին տեսակիտիւ, թէ և չէ ուզած քննական մանրամասնութեանց իջնել, և նոյն իսկ կը կարծէ թէ օտարազգի կամ օտարամոլ պէտք է լինել չհաւատալու համար այն առասպելաց՝ որ ազգային են, — անաւատ քննադատ մի կը գտնայ երբ Ս. Սեղբեստրոսի կը հանդիպի, և կը հերքէ առանձին հատուածով մի՝ Ս. Գրիգորի «Հռոմ երթալու գրոյցը»։

Այդ աւանդութեան երեք աղբիւր ունինք ի նախնեաց. նախ Բուզանդ. (Գ, ԻԱ). «Եւ օգնական և թիկունք լինէր կայսր աշխարհին Հայոց, մանաւանդ զի զոսման յիշեալ զգաշանցն կռելոց զերդմանցն հաստատութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն կոստանդիանոսի և ի մէջ թագաւորին Տրդատայ հղեալ էր»։ Երկրորդ վկայն է Ագաթանգեղոս. (էջ 654) և երրորդ Եղիշէ. «Նախնին մեր Տրդատիս ի ձէնջ թագաւորեալ տիրէր Հայրենի աշխարհիս, սոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս ընկեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռոմայ»։ Իսկ բանասիրութեան կարծիք երկուք են. ըստ Կուլշմիտի՝ ազատ յիշատակութիւն մ'է այն՝ Նեռոնի ժամանակակից Տրդատայ Հռոմ երթալուն։ Այս կարծիքը, զոր կ'ընդունի յօդուածագիրը, արդէն հերքած է Գելցեր[1], որուն համեմատ Տրդատ և Լուսաւորիչ տեսնուեցան Սարգիկէի մէջ կոստանդիանոսի և Եւսեբեայ Նիկոմիդացւոյ հետ, ո՛չ թէ Սեղբեստրոսի, «ինչպէս համոզիչ փաստերով ցուցուց Տէր Մինասեան[2]»։

Սակայն Սեղբեստրոս անունը միջնադարեան խանգարում մի նկատելու համար, հարկ է մոռանալ Եղիշեայ վկայութիւնը. Եղիշէ կամ Եղարու աւանդութիւնը կը ներկայացնէ կամ Ագաթանգեղեայ հնագոյն ընթերցուածը. և հետեւաբար պէտք է ոչ միայն ըսել թէ Տրդատ և Ս. Լուսաւորիչ զացին առ կոստանդիանոս այլ և այն ժամանակ զացին երբ կայսրը «սակաւ մի ժամանակ Լիւրիկէ, տերութեան զորձերը կարգագրելու համար[3]», կենալէն վերջը՝ դարձած էր «ի տիեզերական քաղաքն» Հռոմ, «ի թագաւորական քաղաքն Հռովմայեցւոց»։ Եւ ոչ իսկ յիշատակութեան արժանի է Դաշանց թուղթը զոր միայն կը յիշէ, և որոյ վրայ խօսքը կ'երկարէ յօդուածագիրը։

---

1. Հայկ. եկեղ. սկզբ. էջ 144։
2. Հայաստ. եկեղ. և բուզ. ժողով. պարագայք։
3. Հայկ. եկեղ. սկզբ. էջ 148։

digitised by A.R.A.R.@

Դարձի թուականն՝ 302 կը նշանակուի։ Տրդատ 261ին՝ միայն մանուկան թագաւոր կրնար լինել Հայոց՝ որ երկու կուսակցութեանց բաժնուած էին[1]. Տրդատայ թագաւորութեան, բոլոր Հայոց վրայ, թուականն է 297, վասն զի այս թուին գաշն գրին Հռոմայեցիք Պարսից հետ, և այս ժամանակ արշաւեցին Գոթք, — որոց դէմ պատերազմելով թագաւորեց Տրդատ, ըստ Ագաթանգեղոսի, — ի սահմանս Հռոմայեցւոց։ Միացնելով չարչարանաց ժամանակը և «Հնգետասան ամիսք» Ս. Գրիգորի վիրապի մէջ կենալուն, («Հնգետասան ամ» գնելով պիտի չկարենայ Հայոց դէմ պատերազմիլ Մաքսիմինոս՝ որ մինչեւ 307 թուականը կայսերակից էր) կը հասնինք 299 թուին, ճշգրտոյն թուականին[2]։ Սակայն խնդիրը վիճելի լինելով՝ գրարկուելիք յարմարագոյն ժամանակն է դարագարձը ստնելու։

Ս. Լուսաւորչի կենսագրութեան կը յաջորդեն Ց. Յովհաննիսեանցի երեք ստանաւորները. երկու գարուն, ինձ ու ինձ (անհասկանալի կամ անշնանակ), և Մուսա. անինամ արտայայտութիւնը սովորական գաղափարաց։ Զկայ գաղափարի ամբողջութիւն, յստակութիւն և նորութիւն, որոց փունջը կոչուի «գիւտ»։ Բայց գեղեցիկ են նոյն հեղինակի տողերն առ Ներսիսեան վարժարան, ինչպիսի է նաեւ Յար. Թումանեանի «Մէջիք Եռուսի» պատմական աշխոյժ քերթուածը։

«Մկրտիչ Էմին»ը, թէ և կենսագրութեան մի մասն, բայց բանասիրական մեծարգի յօդուած մ'է։ Երուանդ Շահազիզ կը թուարկէ հոչակաւոր գիտնականին գրութիւնքը, որ բազմաց անծանօթ են ուսերէն լինելուն պատճառաւ, և անոնց բովանդակութիւնը կ'ըսէ. կը նկատէ զայն իբր հրատարակիչ, իբր դիցարան. ներկայացնելով զԷմին մարդ մի՝ որ ազգաց կրօնական միութիւնը կը տենչայ և համոզուած է որ կաթողիկէութիւնը ազգութեան կորուստ չէ, կը խորհրդածէ Ե. Շահազիզ. «Հայ կաթոլիկները, ճիշդ է, չեն կորցրել իւրեանց ազգութիւնը. բայց որ հայ—կաթոլիկները. — հայածէսերը. իսկ լատինածէսները. . Լեհաստանի և Խոտլիայ բազմաթիւ կաթոլիկ Հայերը՝ կորան». բայց այդ կորուստը՝ կրօնից ազդեցութիւնն է թէ պարագայներուն. և գարձեալ ինքնին քահանայապետը չէ՞ խոստիւ պատուիրողն՝ որ կաթողիկեայք պահպանեն իրենց ազգային ծէսերը։... Յօդուածագիրը կը ներկայացուէ յեսոյ, մանրամասնօրէն, Էմինի հնարուածքան և ուրիշ գրութիւններ. ամբողջ յօդուածն՝ գրաւած է Լուսայի 160—302 էջերը։

Բանասիրական յօդուածներէն է «Շիրակաւանի ժողովը», Արշակ Տէր—Միքէլեանի գրչէն՝ և հետեւաբար ստեղծութեամբ տագնապուած ընդդէմ կաթողիկէութեան։ Շիրակաւանու ժողովը չպատմած, կ'ակնարկուի Մանազկերտու ժողովը. «Ս. Յովհան իմաստասէրը, կ'ըսէ, գումարեց 726 թուին Մանազկերտի մեծ ժողովը, սեպտեմբեր 2ին. նորա այդ ժողովը ուրացաւ... Զանհեանը, հարիւր ընարձակ երեսներ նուիրելով այդ ակնյայտնի իրողութեան հերքման. մինչդեռ եղեն հայրապետը ինքն է աւանդում իւր ժողովի պատմագրիները, բոլոր մեր պատմիչները հաստատում են այդ, ժողովի առաջնակարգ եպիսկոպոս Գրիգոր Արշարունին նոյնն է վրկայում, Ապուսֆարան ու Միքայէլ ասորին այդ են հաստատում.. Հ. Զարբհանալեանի

---

1. Տես զայս ցուցուած օտար պատմչաց վկայութեամբ Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիք էջ 34—35։ Տաշեանի Ագաթանգեղոս էջ 116—119։

2. Կարծենք թէ արժէք չունի Խորենացւոյ այս խօսքը. «Յեսրոն և ի տասներորդ ամի թագաւորութեանն Տրդատայ գտաք նստեալ յաթոռ սրբոյն Թադէոսի զնախահայրն մեր Գրիգորիոս». (Բ, ԺԱ)։ Այս խօսքին առանձին աղբիւր մ'ունեցած չէ նա. այլ միայն այսպէս պատճառաբանած. «Ս. Գրիգոր չարչարուեցաւ Տրդատայ առաջին տարին. «Հնգետասան ամ» այլ (ինչպէս կ'ըսէր իւր Ագաթանգեղոսն ալ), վիրապի մէջ մնաց, ենթադրելով տարի մը վիրապէն ելնելուն և ձեռնադրութեան մէջտեղ, Ս. Գրիգոր Տրդատայ ԺԷ տարին հայրապետ օծուած կը լինի»։

digitised by A.R.A.R.@

Հայկական դպրոբեան պատմութեան մէջ կը գտնէք թէ այդ ժողովը Յովհան անունով մի անյայտ վարդապետ է դատարկ և ոչ իմաստասէրը»։

Փոխանակ ժողովոյն՝ թող ցուցնէր Տէր–Միքէլեան այդ սխալներուն զոյութիւնը՝ Զամչեանի և Զարբհանալեանի դրոց մէջ. Զամչեան ոչ միայն կ՝ընդունի Յ. Օձնեցւոյ ժողովը՝ և կը պատմէ յէջ 397, այլ և դայն կ՝երկրորդէ ծանոթութեանց մէջ (Բ հատ. 607 էջ). 607–614 իջից մէջ ուրիշ բան բրած չէ՝ բայց եթէ գտնագտնել Մանազկերտու երեք ժողովները. իսկ 577–630 «ընդարձակ» էջերուն մէջ՝ ոչ թէ այդ ժողովը հերքած է՝ այլ վաւերականութիւնը՝ Յ. Օձնեցւոյ ընծայուած պատմութեան մը՝ այդ ժողովոյն վրայ։ Տէր–Միքէլեան, յոյսընէ ստեղծելու կարողութեամբ[1], կ՝ըսէ թէ Հ. Գ. Զարբհանալեան այդ ժողովը Յովհան անունով անյայտ վարդապետի մ՝ընծայած է (!). այդպիսի բան յաւետեան պիտի չգտնէք Հ. Զարբհանալեանի Հայկական դպրոբեան պատմութեան մէջ». նա, յէջ 462, համաձայնած է միայն Զամչեանի բնածը՝ վերոյիշեալ հակաքաղկեդոնական գրութիւնը Յ. Մանազկերտեցւոյ ընծայելով. «Որովհետեւ մեր հին պատմագիրներէն ոմանք, — ահա իր խօսքերը, — կը շփոթեն իրարու հետ զՅովհան Մանազկերտցի և զՅովհան Օձնեցի կամ զիմաստասէր, առջինին մեղորդութիւնքը երկրորդիս ընծայելով, և երկրորդիս հմտութիւնն ու գրուածները առջինին սեպելով, Զամչեան», և այլն. հոս ոչ ժողովոյ վրայ խօսք կ՝ըլլայ և ոչ անյայտացած Յովհանի մը...»

Յօդուածագիրը՝ բաց ի ըստ կամս սխալներ բաշխելէ Զամչեանի և Զարբհանալեանի, հարազատ կը համարի Մանազկերտի ժողովոյն պատմութիւնը, զոր իբր գիտնական մի՝ բացէ ի բաց պիտի մերժէր։ Զամչեանի ապացուցութիւնը և ոչ իսկ երկբայութեան տեղի կը թողու. սակայն անոնց վրայ ուրիշ «անհերքելի» փաստ մ՝եւս կրնանք յաւելուլ, խոսրովկայ հակաքաղկեդոնական գրութենէ մի[2], խոսրովիկ Յ. Օձնեցւոյ ժամանակակից է, Հ. Բ. Սարգսեանի (Բազմ. 1892, Մայիս, էջ 203–204) գեղեցիկ ցուցման համեմատ, որուն կը համաձայնի կը խոստովանի ինքզինքը Տաշեան[3]. արդ կրնայ Տէր–Միքէլեան հակաքաղկեդոնական գրութիւն մի ընծայել Յ. Օձնեցւոյ, երբ ժամանակակից մը, հակաքաղկեդոնական ժամանակակից մը, նոյն ժողովոյին մէջ գտնուող մը, կը գտնգտի Յ. Օձնեցւոյ վրայ՝ թէ քաղկեդոնականութիւն ընդունեցաւ[4], և կաթողիկոսի նամակին՝ զոր ի մէջ բերած է, երկար հերքում մի կը գրէ։

Ահա այսպիսի հին, հերքուած փաստերով է՝ որ կու գայ Արշակ Տէր–Միքելեան մեր «հողեւոր խաւարի մէջ լուսոյ շողեր արձակել», մեր «քաղաքորդուած սատանիները պարզել», — ինչպէս թէ մէկը ուզենար Ադաթանգեղոսի յառաջաբանով լուսաւորել խաւարը արդի բանասիրութեան՝ որ կ՝ուրանայ Տրդատայ քարտուղարին գոյութիւնը...

Յօդուածին մեացած մասը Շիրակաւանու ժողովոյն պատմութիւնն է, յաւելուած մը՝ իր Հայատ. եկեղ. և բուզ. ժողովոց պատգայք գրքին՝ զոր վերը յիշեցինք։ Կը համարի թէ Շիրակաւանու ժողովը՝ քաղկեդոնականութեան անմասամբ վճիռ տուած ըլլայ, վասն զի ա. հակաքաղկեդոնական է այն նամակը՝ զոր ժողովոյն կողմանէ, ինչպէս կ՝ըսեն կիրակոս և Վարդան, գրեց Սահակ Մռուս, և զոր յօդուածագիրն ալ «գեղեցիկ և իմաստասիրական» կը գտնէ, կի-

---

1. Նա, շատ արամաբանօրէն, այդ սխալներուն տեղը երբէք չնշանակէր։

2. Տաշեանի մանր ուսումնասիրութիւնք գրոց մէջ հրատարակուած. էջ 68–75։

3. Անդ. էջ 65։

4. Անօգուտ չէ յիշել այս տողերը. «Յոհան իմաստասէրը 719–720 թուականին կայացած ժողովներում Հայոց եկեղեցու անունով հրապարակով խոստովանեալ է երկու բնութեան վարդապետութիւնը»։ (Ե. Շահխաթունեանց. Մկրտիչ Խրիմեան, էջ 182)։

digitised by A.R.A.R.@

բակոսի մը ճաշակով...։ բ. Վասն զի Նանայի թագմանիչը, ժամանակաւ մեռ ժողովոյն, կը յիշէ Եռեսիկոս անձ մի՝ Աշոտէն հալածուած քաղկեդոնականութեան համար։ Այդ եռեսիկոսը ուրիշ ոչ ոք չէ, քան յօդուածագրին, բայց եթէ Փոտայ թուղթը բերող Վահան եպիսկոպոսը։

Սկսինք այս երկրորդ փաստէն, որ ժամանակագրական սխալ մի է. այդ եռեսիկոսը, — ինչպէս կարդալ կ'ուզէ յօդուածագիրն «Ապիկուռա» անունը, — զայն Աշոտը կը «Ապիայր դարձուցանել քաղկեդոնիկ[1]», որ կռուած էր Սեւադայի դէմ, և յետ երկու տարւոյ մեռած[2]. արդ այդ Աշոտը ոչ ոք է՝ բայց եթէ Աշոտ Մսակեր (+ 720), Մեծն Աշոտոյ պապը. և յիրաւի ժամանակագիր մ'ալ զոր կը յիշէ Մատ. Հայկ. բարգմ. Ապիկուռայի Հայաստան գալը կը դնէ ՍԾ (= 702) թուին, շատ հեռու Մեծն Աշոտէ, որ թագաւորեց 860—890։

Գալով առաջնոյն՝ Տէր-Միքէլեան անուղղակի կ'ուզէ գիանալ ժողովոյն որոշողութիւնքը, մինչդեռ արդէն հրատարակուած են նորա կանոնները, որ կը նզովեն թէ՛ քաղքեդոնականները և թէ հակաքաղկեդոնականները։ Այս անկարելի լինելով, — թէ և Ըստկարեանց[3] մոքերը խաղաղելու համար հնարուած կ'ենթադրէ այդ հակասութիւնը, — հարկ է այն կանոններէն մին լուսանցքէն մուտ գտած յաւելուած մի համարիլ։ և անշուշտ հակաքաղկեդոնականն է այն՝ քանի որ միւսն կը համաձայնի ճշդիւ Վահանայ առաջարկներուն. «Եթէ ոք գքաղկեդոնի սուրբ ժողովն... յանդգնի նզովել իբրեւ զպղծոյն Նեստորի հանճայնեալ», և այլն. և քանի որ Զաքարիա յեռոյ լուծումն կը խնդրէ Վահանէն մի քանի տարակուսանաց։ Յօդուածագիրն չէ խօսած բնաւ Զամչեանի այն խօսքին վրայ՝ թէ Սահակ Մռուտ ժողովէն վերջը հաստատ, և գրեց կեղծ թուղթ մի, — ուստի Վարդան և Կիրակոս կրնային խաբուիլ, — որ չհաստատ Բիւզանդիոն։

Աւելի չերկարենք. թողունք յօդուած մը՝ որ գիտութեան միայն դիմակը ունի և կը գտնէ զայլս՝ իւր կուսակցական ձգտումներով. գեղեցկագոյն հատուածներ կան Լումայի մէջ. ընդհանունք «Հնից-Նորից»ը. վայելենք Լօռիի մէջ թարմ առաւօտ մը, գեղեցիկ բնութիւն մը, և երազենք հայրենի աւերակներու վրայ...։ Եւ յեռոյ մաղթենք Յօդուածագրին՝ որ իւր «Լումայն» նոր փայլ, աւելի յաջողութիւն ունենայ՝ Նոր Դարուն մէջ։

Դ. Տ. Ս.

---

1. Տպագրին մէջ Վարդանայ։ «Լանայր դարձուցանել զնա... Քաղկեդոնի». պակաս բան չկայ։ կ'ընտրենք Հ. Գ. Զարբհանալեանի յիշատակած ժամանակագրի ընթերցումը. (Մատ. հայկ. բարգ. 650 էջ)։
2. Էջ 78. իսկ Մեծն Աշոտի վրայ յէջ 82—86։
3. Եկեղ. Պատմ. էջ 196։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹՄԲԱԳՐԱԿԱՆ

ԲԱԶՄԱՎԷՊ. — Խոսքերոյ մեծ սուզը . . 386
† Ուսկիրդոյ Ա. - Ազգեցութիւն. - Ո՛վ թագուհի մեր, ողջ լիր։ - Կենսագրական յուշք Ուսկիրդոյ Առյ. - Թագաւոր Վիկտոր Էմմանուէլ Գ և թագուհին հեղինէ . 386
ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս. — Մրցանակը . . . 398

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. Մ. — Արեւելք լուսաւորութեան հայոց 401
ԵՐՄՈՆԻ Վ. — Քննադատական ուսումն. Ս. Գրոց հայկ. թարգ. վրայ։ թղմմ. ՍԱՐԲԱՆ Հ. Ս. 406
ԷՓՐԻԿԵԱՆ Հ. Ս. — Արքայկաղնի վանք — Աւանց — Բարիրդ 411
ՔԱՐԻԴ ՅՈՎՍ. — Պատմական քերականութիւն կիլիկեան հայերէնի. թարգմ. Հ. Յ. ԱՒԳԵՐԵԱՆ 415
Գ. Ա. Մ. Վ. — Հայկական երաժշտութիւն . 418

ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ. — Նոր քննադատի հնացած կարծեաց առթիւ։ - Բաց նամակ առ Գ. Շահինեան 225
Գրախօսական. — Կանոնագրութիւն հայոց թեմական դպրոցների — Դ. Տ. Ս.։ — Պատ. Ներսիսեան դպրոցի — Ն. Ն. Ա.։ — Լումայ— Դ. Տ. Ս.։ 426

digitised by A.R.A.R.@